Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

10-րդ դասարան

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Շոգ **միջօրե** էր: Ամեն ոք՝ մարդ ու անասուն, պատսպարվել էին, ով որտեղ կարող էր:

Նոյը խաղողի այգում գինի էր վայելում: Եվս մի քանի գավաթ ու գինին խայտաց երակներում: Զգոնությունը կորցրած՝ նա իր վրայից հանեց բոլոր հանդերձանքը և առանց հագուստ՝ միանգամայն մերկ, ընկավ գետնին ու քնեց: Սեմն ու Քամը տեսնելով հորն այդ վիճակում՝ սկսեցին ծաղրելով բարձր քրքջալ: Կրտսեր որդին՝ **Հաբեթը**, եղբայրների հորն անարգող անվայելուչ **պահվածքից** վրդոված, խիստ կերպով սաստեց նրանց և իսկույն ծածկեց հորն իրեն **թիկնոցով**: Արթնանալով՝ Նոյը իսկապես ամաչեց իր **արարքից**:

Հաջորդ առավոտ նա, որպես երախտահատույց մահկանացու, բարձրացավ Մասիսի գագաթին և զոհեր մատուցեց Աստծուն: Առաջին օրը զոհաբերեց մի գառնուկ, երկրորդ օրը՝ մի **կապիկ**, երրորդ օրը՝ մի խոզ: Հաբեթի **հարցին**, ինչու է հայրը ընտրել հենց այդ կենդանիներին, Նոյը պատասխանեց.

- Գինու առաջին գավաթից մարդը դեռևս հեզ է գառան նման, երկրորդ բաժակից վերածվում է խեղկատակ հիշեցնող կապիկի, իսկ երրորդ բաժակը կերպարանափոխում է մարդուն այնպես, նույնիսկ մտերիմները չեն ճանաչում. նա խոզի պես բերանքսիվայր թավալվում է գետնին՝ արժանանալով շրջապատի արհամարհանքին:

1.Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով կետադրական սխալները, և անհրաժեշտ տեղերում լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները:

2. Բնագրից դո՛ւրս գրիր սխալ գործածված բառերն ու բառաձևերը՝ դիմացը նշելով ճիշտ տարբերակը:

3.Բնագրից դո՛ւրս գրիր *հտպիտ, այպանել, կթղա, քամահրանք, անպատշաճ, պարեգոտ, ըմբոշխնել* բառերին համապատասխանող հոմանիշները:

4.Բառակազմորեն վերլուծի՛ր *երախտահատույց, անասուն, անվայելուչ, առաջին* բառերը՝ ընդգծելով արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով:

5. Շարահյուսորեն վերլուծի՛ր բնագրում ընդգծված բառերը:

6. Տրված բառերն արտահայտի՛ր հոմանիշ դարձվածքներով. *ծաղրել, նախատել, ամաչել*:

7. Գրի՛ր բառային և բառաքերականական համանունների մեկական զույգ.
յուրաքանչյուրի կողքին ներկայացրո՛ւ խոսքի մասը, քերականական հատկանիշները:

8. Կազմի՛ր նախադասություն տրված կաղապարով. *Հատկացուցիչ- որոշիչ-ենթակա-ձևի պարագա-ստորոգյալ-ուղիղ խնդիր:*

9. Գրի՛ր շարադրություն «Հանուն իմ երկրի» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում):